1 ՄԻՆՉԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Քվեարկության օրը ժամը 7:00-8:00

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն

- ☐ ստուգել չհրկիզվող պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը և ոստիկանության ծառայողներից ընդունել պահարանը.
- ☐ գրանցամատյանում լրացնել չհրկիզվող պահարանն ընդունելու մասին արձանագրությունը.
- ☐ իրականացնել վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար.
- ☐ վիճակահանության արդյունքները գրանցել գրանցամատյանում.
- ☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնագետը սահմանված կարգով ստուգում է տեխնիկական սարքավորման աշխատանքը, մուտքագրում ընտրական տեղամասի նույնականացման տվյալները (մասնագետի կոդը) և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք.

- ❒ եթե տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվում են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, ապա յուրաքանչյուր մասնագետ ստուգում է իր կողմից սպասարկվող սարքավորման աշխատանքը և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը.

- ☐ գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը (տեղեկանքները) սոսնձել գրանցամատյանում.
- ☐ բացել չհրկիզվող պահարանը.
- ☐ հանել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնել նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը.
- ☐ հանել հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարել կնիքի համարը.
- ☐ ստուգել քվեատուփի դատարկ լինելը (բարձրաձայն հայտնել այդ մասին), և մինչև փակելը այն ցուցադրել նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց.
- ☐ փակել, հատուկ կապիչներով և ինքնասոսնձվող ժապավեններով կնքել քվեատուփը.

☐ համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ հանել յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի հարյուրական փաթեթներով քվեաթերթիկները (մեծամասնական ընտրակարգի դեպքում՝ հարյուրական փաթեթով քվեաթերթիկները) և մեկ փաթեթ քվեարկության ծրար (հարյուր հատ) ու հանձնել քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամին (անդամներին).

☐ հանել ընտրողների ցուցակները և հանձնել ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին).

- ❒ տեխնիկական սարքավորումը չաշխատելու կամ չլինելու դեպքում պահարանից հանել համարակալված կտրոնները և հանձնել ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին).

Միաժամանակ մեծամասնական ընտրակարգով համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններ անցկացնելու դեպքում հանձնաժողովին ինքնասոսնձվող դրոշմանիշերը տրամադրվում են հաշվի առնելով յուրաքանչյուր ընտրության (համայնքի ղեկավարի և ավագանու անդամի) համար ընտրողների թիվը՝ կլորացված դեպի վեր՝ մինչև մոտակա հարյուրյակը: Այդ դրոշմանիշերն ունեն նույն տեսքը:

- հանել հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ և հատկացնել ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին և գրանցամատյանում կատարել համապատասխան գրառում.
  - եթե միաժամանակ անցկացվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի քվեարկություններ, ապա յուրաքանչյուր ընտրության համար հատկացնել հարյուրական ինքնասոսնձվող դրոշմանիշ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ***համամասնական ընտրակարգով*** ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկներից՝ 3-ից 5 քվեաթերթիկ գցել քվեարկության խցիկներում տեղադրված չօգտագործված քվեաթերթիկների արկղի մեջ և ստուգել, որ քվեարկության խցիկներում գրիչներ դրված չլինեն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվով, որպեսզի ժամը 8:00-ի դրությամբ կատարված և ավարտված լինեն:
- Հանձնաժողովի նախագահը ժամը 8:00-ին բարձրաձայն հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:
- Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղամասը բացված լինելու մասին:

▼ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

- ► մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է հաղորդվում համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.
- ► հաղորդված թվերը գրառվում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

2 ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն

- ☐ ժամը 20:00-ին հայտարարել քվեարկության ավարտի մասին.
- ☐ արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ☐ քվեարկության սենյակում գտնվող ընտրող-ներին տալ քվեարկելու հնարավորություն.
- ☐ փակել քվեատուփի ճեղքը.
- ☐ փակել տեղամասային կենտրոնը.
- ☐ ***մինչև ժամը 20:30*** **ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հաղորդել տեղամասում քվեարկության մասնակիցների թիվը:**

3 ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն

- ☐ փաթեթավորել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները.
- ☐ անհատական կնիքների փաթեթը կնքել, ստորագրել և տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում.
- ☐ ընտրողների հիմնական ցուցակում ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվել քվեարկության մասնակիցների թիվը, բարձրաձայն հրապարակել և արձանագրել գրանցամատյանում.
- ☐ եթե առկա է՝
  - ❒ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակ,

ապա, ընտրողների լրացուցիչ ցուցակներում ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվել լրացուցիչ ցուցակով քվեարկության մասնակիցների թիվը, բարձրաձայն հրապարակել և արձանագրել գրանցամատյանում.

- [ ] բոլոր ցուցակների ստորագրությունների թվերը գումարել, գումարը բարձրաձայն հրապարակել որպես քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվ և գրառել գրանցամատյանում.
- [ ] եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա տեխնիկական սարքավորման միջոցով տպել ավարտական տեղեկանք.
  - [ ] տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում՝ այդ մասին համապատասխան գրառում կատարել գրանցամատյանում.
- [ ] տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրել ընտրական փաստաթղթերի մեծ պարկում.
- [ ] տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, պահանջի դեպքում տրամադրել ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և վստահված անձանց.

☐ ընտրողների հիմնական ցուցակը, եթե առկա է նաև

❒ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակը

տեղադրել առանձին մեկանգամյա օգտագործման փոքր պարկում.

☐ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ստորագրում են փոքր պարկի վրա, հանձնաժողովի նախագահը կնքում է հանձնաժողովի կնիքով և վրան գրում ընտրական տեղամասի համարը.

☐ հաշվել ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնները, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել մեծ պարկում, թիվը գրառել գրանցամատյանում.

☐ հաշվել ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել մեծ պարկում, թիվը գրառել գրանցամատյանում.

☐ գումարել ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված և ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների թվերը և գումարը որպես քվեարկության

մասնակիցներից ստացված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվ գրառել գրանցամատյանում.

- ☐ հաշվել չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել մեծ պարկում, թիվը լրացնել գրանցամատյանում.
- ☐ հաշվել չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորել, փաթեթը կնքել և տեղադրել մեծ պարկում, թիվը լրացնել գրանցամատյանում.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ***Համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չեն հաշվվում, և նշվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հատկացրած կտրոնների թիվը:***
- ***Միաժամանակ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում առաջին հերթին ամփոփվում են համայնքի ավագանու ընտրության քվեարկության արդյունքները:***

4 ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ

Բացել քվեատուփը

- [ ] քվեատուփից հանել քվեարկության մեկ ծրար.
  - ***ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չհանել, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարել.***
- [ ] **հանել** քվեաթերթիկը ծրարից.
- [ ] բարձրաձայն **հայտարարել** քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին.
- [ ] սահմանված նմուշի քվեաթերթիկի դեպքում **հայտարարել** վավեր կամ անվավեր լինելու մասին.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

✓ սահմանված նմուշի քվեաթերթիկն ***անվավեր է*** նաև, եթե ծրարում, քվեաթերթիկից բացի, առկա է այլ իր:

▼ **եթե ծրարում, քվեաթերթիկից բացի, առկա է այլ իր, ապա քվեաթերթիկը մարվում է ծրարի և ծրարում առկա իրի հետ այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել իրի առկայությունը:**

▶ Այդ մասին կատարվում է համապատասխան գրառում գրանցամատյանում:

- ☐ վավեր քվեաթերթիկի դեպքում բարձրաձայն **հայտարարել** նաև կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը.
  - ❒ մեծամասնական ընտրակարգի դեպքում՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը.
- ☐ քվեաթերթիկը **ցուցադրել** այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար.

- ☐ քվեաթերթիկը դնել համապատասխան կուսակցության, կուսակցությունների դաշինքի,
  - ❒ իսկ մեծամասնական ընտրակարգի դեպքում՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի համապատասխան թեկնածուի

օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ.

Այս գործողությունները կրկնվում են քվեատուփում առկա բոլոր ծրարների և քվեաթերթիկների համար

- ☐ **հաշվել** յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի, իսկ մեծամասնական ընտրակարգի դեպքում՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի օգտին քվեարկված քվեաթերթիկները, թվերը բարձրաձայն հայտարարել և արձանագրել գրանցամատյանում.

- **հաշվել** անվավեր քվեաթերթիկները, թիվը բարձրաձայն հայտարարել և արձանագրել գրանցամատյանում.
- **փաթեթավորել** անվավեր քվեաթերթիկները, փաթեթը կնքել և տեղադրել փաստաթղթերի մեծ պարկում.
- **փաթեթավորել** կողմ քվեարկած քվեաթերթիկներն առանձին փաթեթներում:

Յուրաքանչյուր փաթեթի (ծրարի) վրա նշել դրա պարունակությունը:

- քվեարկության ծրարները (ինչպես քվեատուփից հանված, այնպես էլ չօգտագործված),
- չսահմանված նմուշի քվեաթերթիկները,
- ընտրողներին չտրամադրված, ինչպես նաև ընտրողի կողմից չօգտագործված քվեաթերթիկները

չեն հաշվարկվում, հաշվի չեն առնվում արդյունքներն ամփոփելիս, փաթեթավորվում են առանձին փաթեթներում և այն առանց մեծ պարկի մեջ տեղադրելու, ներկայացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

5 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂՎԱԾՔԻ ԿԱԶՄՈՒՄ

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները, տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն և այդ արձանագրությունից քաղվածք:

Արձանագրությունը և քաղվածքը պետք է կազմել ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո:

Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից

- Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները.
- Հանձնաժողովի նախագահը կնքում է արձանագրությունների 4 օրինակները.
- Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը:
- Եթե հանձնաժողովի անդամն արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արձանագրությունը ստորագրվում է միայն բոլոր տվյալները լրացնելուց հետո:

- ✘ **Արգելվում է նախապես ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթերը:**

Արձանագրության 4 օրինակից՝

- ☐ ***մեկ*** օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- ☐ ***մեկ*** օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում.
- ☐ ***երկու*** օրինակը ներկայացվում է տարածքային ընտրական հանձնաժողով:

! ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արձանագրությունը կազմելուց հետո հանձնաժողովը լրացնում է քվեարկության արձանագրությունից քաղվածի 1 օրինակ, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից և առձեռն ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրամադրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում՝

- ☐ ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման մեծ պարկը,
- ☐ ընտրողների ցուցակների փոքր պարկը,
- ☐ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,
- ☐ քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի 1 օրինակը,
- ☐ հանձնաժողովի գրանցամատյանը,
- ☐ հանձնաժողովի կնիքը,
- ☐ տեխնիկական սարքավորումները և մյուս պարագաները,
- ☐ չօգտագործված քվեաթերթիկները,
- ☐ քվեատուփից հանված քվեարկության ծրարները,
- ☐ չօգտագործված քվեարկության ծրարները,
- ☐ քվեատուփը,
- ☐ քվեարկության խցիկները: